

ԻՐԱՆՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոլսի խաղաղ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (Երկու քիչ մեկ ծառայ) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եւայլն դրկի հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՆՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պոլսի)
Редация на Вѣстникъ
«И равункъ»
ВАРНА (България)
Rédaction du journal
„Ira vounk“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն եւ չեն դրկուիր եւ յարմար դաստիարակութեան կը հրատարակուին աւարտընի կամ մասաւր:
Խմբագրութեան տղը 20 սանթիմ. երեքին սանթիմ. անգամներու համար 20 0/0 զեղչ կը չինի:

Կը խնդրուի Ռուսաստանի, Եւրոպայի եւ Ամերիկայի մեր յարգող բաժանորդներէն որ հաճին իրենց բաժնեկիցները ԱՆՅԱՊԱՂ զրկել մեզ, նկատելով թէ ներկայ աւարտընի ու թերութեամբ ալ կը լրանայ:

ՎԱՌՆԱՅԻ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շուրջ տարիէ մը ի վեր է որ վառնայի թաղ. խորհրդարանը թափուր մնացած է:
Նախորդ թաղականութեան հրաժարելէն ի վեր այդ պաշտօնը առժամակաւ ազգ. վարժարանաց հոգաբարձութիւնը վարել կը ջանայ, որչափ որ կը ներհին իր զբաղմունքը եւ ձեռնհասութեան սահմանը: Բայց այդ սահմանէն անդին կան գործեր եւ հարկեցուցիչ պարագաներ որոնց կիրառումը անհրաժեշտօրէն թաղ. խորհրդոյ մը գոյութեան պէտքը կը չենտէ, որպիսին է այսօր վարժարանի շինութենէն մնացած պարտքի խնդիրը, որ եթէ քանի մը շաբաթ ալ անլուծելի մնայ պահանջատիրը անդառնալի կհրապարակուի ձեռքէ պիտի ելնէ. ինչ որ վառնա. յարնակ հայրոց համար նիւթական եւ բարոյական մեծ կորուստ մըն է:
Երկուր ամիսներէ ի վեր Հոգաբարձութիւնը ըստ իւր կարեաց աշխատեցաւ թաղական խորհրդոյ պակասը լեցնել. բայց այս տեսակ հարկեցուցիչ պարագաներու տուլեւ բնական էր որ պիտի կատէր: Մանաւանդ երբեք տեղի թէ արդէն հոգաբարձութեան պաշտօնը բաւական կը զբաղեցնէ զիրենք. իսկ իրենց անհատական գործերը աւելին ընել չեն ներեր: Ուստի ամեն զոհողութիւն միայն 3-4 անգէ սպասել ոչ արդարութիւն է եւ ոչ նպատակայարմար կրնայ ըլլալ: Արդ ամեն պարագայի մէջ թաղ. խորհրդոյ ընտրութիւնը կատարել անհրաժեշտ է:

Այժմ խնդիր է որոշել թէ այս անգամ որո՞նք թաղական ընտրելու ենք. մեծ աղանքը թէ՛ պզ-

տիկ աղանքը:
Վերջին քանի մը տարիներու փորձառութիւնէն օգտուելու անքանշուտ:

Այս տարիներու մէջ մեծերուն ալ պատկերներուն ալ գործառնութիւնները տեսնեք. ասոնց մէկ կարգը գործելու տրամադրութեանէ զուրկ է, միւսն ալ ասոնց ալ մուկի չէ կարող պաշտօնավարել եւ նեղը մնացած պահուն կտանէ կը քալէ. աս ալ խոստովանիք թէ՛ քիչ շատ գործողին ալ արդէն կողմեր չեն պակսիր. հասօրինակներ թաւել հարկ չէ. քանի որ անցեալին օրինակները դեռ երբեք, այնպէս որ ամեն վառնայի կարող է յիշել:
Մեր կարծիքով, նոր արդիւնքներու եւ նոր ձգտումներու չի հանդիպելու համար, ամենէ կրտ. բուկ միջոցն է, անկողմնակալ եւ չեղող անձներէ կազմել թաղ. խորհուրդը, ասոնք ըլլալու են պարկեշտ արհեստաւորներ, խանութպաններ, ուղիւստ եւ գործունեայ: Մեր ազգային գործերուն մէջ պէտք չէ փնտռել հարուստ ու ազդեցիկը. որովհետեւ միշտ տեսնուած է թէ ասոնք իրենց «Ես»-երը, իրենց քաղաքները տուած քչիւս համար շատ անգամ փոխանակ օգուտ տրամադրելու փնտռու երկպառակութիւն առաջ բերած են:

Մեր նպատակը չէ հոս ընտրելեաց ցանկ մը մէջ տեղ զնել. այլ միայն ընդհանուր գծերը համառօտակի պաշտօնով կաշու կընենք տեղոյս առաջ քահանային, որ ընդ փոյթ՝ ընտրողական ժողով մը մը առաջ՝ ընդհանուր ժողով մը գումարէ, եւ հոն իր նախագահութեան տակ օրոշուի թէ ընտրողական ժողովը օրոշեմէ՛ կազմուելու է:

Հարցում մըն ալ հանգանակիչ մասնախումբին:

Ի՞նչ ըրիք պարոններ երեք շաբաթէ ի վեր, քանի՞ ֆրանք հաւաքեցիք. ջեր գիւմուսներէն ի՞նչ արդիւնք եւ ի՞նչ նպատակաւ ուսացաք. ազգային գետիւնը պիտի ազատի: Բայց ջեր լուծութիւնը կը մատեն թէ չէք յաջողած: Եթէ

չէք յաջողած պէտք է հրապարակաւ պարզէք թէ ի՞նչ արդիւնքներու հանդիպած էք որպէս զի ժողովուրդն ալ իրողութիւնը իմանայ եւ իր գլխուն ճարը մտածէ:

Յ. Գ.

ՀԱՇՈՒԵՅՈՅՑ
ԼԱ ՇԵՅԻ ՎԵՇԱԾՈՂՈՎԻՆ ԱՌԹԻ ՎԱՌՆԱՅԻ ՄԷՋ
Ն. Տ. ԼՊՐԻՆԻ ԶՅԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ ՄԻԹԵՆԿԻՆ

ՄՈՒՏՔ	Քր. սնր.
Հանգանակութեան	240. 35
Միթիւնիկին օրը բակին	
մէջ գրուած պնակներէն	279. 25
Երկրորդ հանգանակութեան (27/9 99)	28. —
Համագումար	539. 60
ԵԼՔ	Քր. սնր.
Տպագրութիւններու համար	20. —
Այլեւայլ համակներու ապագրութեան համար	
Թուղթ եւ պահաւան	7. 70
Նամակագրութիւնը եւ փոսթի ալ եւ ուղիւստ	18. 50
Միթիւնիկին յայտարարութիւնը ցրուողին	1. —
Լա Շէյի վեշածողովին քաշուած հեռագրի	104. 10
Վառնայի կեդրոնական Թանգարանին յանձնուած	388. 30
Համագումար	539. 60
Ի գիւմաց Միթիւնիկի դիւանին՝ Նախագահ Ա. Անիւսեանեանց Գարտուղար Տ. Յ. Աճեմեան Գանձապետ Տ. Յ. Բարսաւեան	
23 օգոստոս 99, Վառնա	

ՀԱՇՈՒԵՅՈՅՑ
ԼԱ ՇԵՅԻ ՎԵՇԱԾՈՂՈՎԻՆ ԱՌԹԻ ՎԱՌՆԱՅԻ
ԲԱՆԱԲԵՆԵՐԸ ՎԱՌՆԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱ
ԽՄԲԻՆ ԶԵԿՈՒՄ ԳՈՒՄԱՐՆԵՐՈՒ

ՄՈՒՏՔ	Քր. սնր.
Վառնայի Միթիւնիկի դիւանէն	388. 30
Թրնովայէն	20. —
Շուրջայէն	30. —
Պուրկազէն	30. —
Պրախլէն	60. —
Սիւլիւնէն	30. —
Սիլիստրէն	41. 15
Ռուսուրէն	100. —
Բլովուրէն	100. —
Թրիէսթէն, ազգային մը	10. —
Պուրէշէն	60. —

Բլովուրէն	159. —
Համագումար	1028. 45
ԵԼՔ	Քր. սնր.
Տպագրութեան համար	16. —
Փոսթի	12. 60
Հասարակ Ռուսէնին	
Կաղի, մոմի եւ իր ծառանութեան համար	7. —
Աճիւ, արծաթ գրամով գնուած 26 1/2 նարդէնի համար	29. 25
Տ. Միւսա Չերազին զրկուած 99 ապրիլի 30ին չէլով մը 27 1/2 նարդէնի	550. —
Նոյն չէլին համար միջնորդէք եւ զրոյս	3. 55
Չորս քաղաքներու համար հեռագրի	2. 45
Կրկին Տ. Միւսա Չերազին զրկուած վերջին դումարը եւ զրկելու համար եղած ծախք	407. 60
Համագումար	1028. 45
Ի գիւմաց Վառնայի կեդրոնական Թանգարանին	
Ատենապետ Դոկ. Այ. Արաքէլեանց վան. Ասեմադարի Տ. Յ. Աճեմեան Գանձապետ Տ. Յ. Բարսաւեան	
26 օգոստոս, 99 Վառնա	

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բուսնոյ 28 օգոստոս 99
Ձեր պատուական թերթի մէջ անկուն մը շնորհեցէք ներկայիս, առ որ կը կանխեմ իմ ջերմ շնորհակալիքն:
Ամսոյս 20ին տեղոյս ընթերցարանի Սրահին մէջ ընկերական լաւ երեկոյթ մը ունեցանք սահմանափակ ընկերներով. նիւթ ունենալով խորհրդակցել տեղոյս հայ ազգաբնակչութեան մէջ տիրող խռովութեանց բարձման համար «յիշուի չիշուի» առթիւ Օրմանեանի անունն. ժողովը իր կողմանէ եօթը պատուաւոր ազգայնոց իրաւունք տուաւ երթալ բանակցելու եւ միանգամ ընդ միւս վերջ առաւ կարեւորութեան մէջ տիրող անտեղի անհամաձայնութեանց: Ուրախ ենք այսօր աւետել թէ, երեկ դիւր տեղոյս թաղականութեան հետ կայացած որոշման մը համաձայն, այսօր առաջին եւ վերջին անգամ լինելով յիշուեցաւ Օրմանեանի անուն, միմիայն մի քանի մարդոց քահանայութիւնը գոհացում տալու նպատակաւ: Շնորհիւ թաղականութեան հետ բանակցող եօթն անձնաւորութեանց ջանքերուն բոլոր պաշտական հայրն այսօր ու եւ չփոթութեան

տեղի չտուին և չնայն իսկ մեծ մասն եկեղեցի չգնաց Օրմանեանի անունն լսելով չբորբոքուելու համար։ Այս առթիւ հրապարակու հնորակալութեան արժանի են մեր կարգած եօթն անձինք որ անխնայ ջանքերով գիտցան համերաշխութիւն հաստատել «Երևուի չը յիշուի» ըսող ազգայնոց միջեւ։ Թէ եւ «չը յիշուի» ըսողներն 5—6 հարիւր մարդ են, իսկ «Երևուի»ի կողմնակիցներն մասնի վրայ համբուով մի քանի կեղծամով ու սնգորով զարդարուողներ են, բայց հայ գաղութը փաստացի կերպով պարզեց իր մեծահոգիութիւնը տեղի տալով իրմէն հոգեով, մարմնով եւ նոյն իսկ թուով թոյլ տակար, ու քիչ մարմնով մը հետ չափուելն, որն թէեւ իր փոստած մասն կը կազմէ, բայց իւրն լինելուն համար ներքեց ու գոչեց «Թողէք մեռելոց, թաղել զմեռեալս իւրեանց»։

Մասնաւոր գոհունակութեան արժանի են տեղւոյս բնիկ կարգ մը երիտասարդներու ազնիւ յառաջդիմական ոգին, որոնք ցոյց տուին այս առթիւ։ Բայց մենք հրապարակաւ խորհուրդ կը տանք այդ ազնիւ պարոններուն, որ այս առիթով փոքուն եւ անկարեւոր խնդիրներով իրենց ուժերն չսպառեն, այս առիթով մօտիկ եւ գործնական ու կենսական խնդիրներով պաշտպանին, ինչպէս ահա ուսումնական տարին կը մօտենայ, զպրօքը իր անկեալ դրութեանէն բարձրացնեն եւ քայքայիալ ընթերցարանի ընկերութիւնը կազմակերպեն։ Եւ այն ատեն պիտի արժանանան մեր սրտագին եւ անկեղծ շնորհակալեաց, ապա թէ ոչ իրաւունք պիտի ունենանք զիրենք կոչելու փառքուրջ հովիւր։ Օ՛հ, Բուսուրի ճեղագի եւ դրսեցի երիտասարդութիւն, ձեռք ձեռքի տուէք, վանեցէք ձեր մէջէն այդ տիմար գաղափարն դրսեցի եւ ներսեցիի բառերն, խորապէս համոզուելով թէ ամենքնիւ ալ միեւնոյն հայրենեաց զաւակներ էք եւ ամենքնիւ ալ համաչափ պարտականութիւններ ունիք Ձեր տոհմին ու սերունդին զարգացման ու բարգաւաճման Ս. գործին մէջ։

Ձեզ այսպէս տեսնելու փափաքանք կողմունեմ ամենեցունցդ մեծաւ յարգանքով։

ԳԱՂԹԱԿԱՆ

ԲՈՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (37)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՅԿԵՐ ՄԸ

— Ի. Ե. —

ՄԱՍՆ Բ.

Վարչական մարմնի եղեռնադատ նիստը նոր վերջացած էր երբ Ս. Գէորգ թաղին զանգակները տխրագին ղողանջիւններով օղբ լեցնել սկսան։ Շուշանի մարմինը եկեղեցի փոխադրուած էր։ Տիպար հայուհին արտասովոր գեղեցկութեամբ կը փայլէր մահուան դազադին մէջ։ Աչքերը սակաւիկ մը բաց մնացած էին եւ կարծես անոնցմէ վըրէժխնդրութեան աղաւանդ նայածք մը դուրս կը պոթկար։ Երեսնամեակէ առաջ տիկին Սաթեմիւրը անոր մօտը լուռ եւ մռնել կը հսկէր. լաց ու կոծի ձայն չկար։

Մահահաւեր արարողութիւնը ըսկաւ։ Խաթունը միշտ դադողին վրայ ծռած էր, փակ աչքերով, Շուշանին պլլուած, բերանը անոր բերանին կը-

ՅԱԽԱԼԻ ՅՈՒՍԱԽԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Բարիկ 29 օգոստոս 99

Բարիկ գալէ առաջ՝ մեծ հաւատք ունէի թէ հայութիւնը ներկայացնող երիտասարդ ուսանողները՝ յառաջդիմութեան շաւղին մէջ՝ ապագայ նշանաւոր եւ ազգին պատիւ բերող անհատներ ըլլալու սահմանուած են։ Բայց դժբաղդաբար հինգ ամսուան ուսումնական ընթացքի ընթացքին զիս դառնապէս կը յուսահատեցնէ՝ տեսնելով ապականած ու ալլասերած պարոնները (աննշան բացառութիւն մը յարգելով անշուշտ) օրուան ամբողջ ժամերնին համբաւաւոր ֆառութիւն լախէնի սրճարաններուն մէջ, ընկերակցած մէջ մէկ աղտոտ բողբոռ հետ անդամանելի կերպով կը վնասուին թէ բարոյապէս թէ ֆիզիքապէս եւ թէ նիւթապէս։ Խեղճ ծնողներ ու պաշտպաններ, մինչեւ ե՛րբ պիտի խաբուիք, ձեր զաւակներուն ու պաշտպանեալին։ Ըսեն անարգ ստախոսութեանցը, պէտք է գիտնաք որ, հազար անգամ աւելի լաւ ըրած կըլլայիք, եթէ իրենց հայրենի բնագաւառին մէջ, ձեր պաշտպանութեան տակ մէջ մէկ խանութպաններ չնած ըլլայիք։ Այդ փճացած պարոններուն մէջ կան շատեր որ հինգ տարիներէ ի վեր կարգերնին չեն փոխած եւ վատութեամբ յանգչեալ են խաբել իրենց ծնողքը կամ պաշտպանը, թէ փալլուն քննութիւններ անցնելով յաջողած են իրենց կարգին առաջինը ըլլալ, կայ ուրիշ շատեր ալ որ երբեք ոտքերնին դպրոցին չմէն ներս չեն դըրած ու խաբած են որ էքիշտիէն են, այո՛, բայց ի՞նչի. ցաւեցէք երբ ըսեմ անբարոյականութեան։

«Սօսպոն»ի գրականութեան ճիւղին ազատ ուսանողներէն մէկը (երբեմն պաշտպանեալ կը թաւաք ազգայինէ մը) իմաստասէր-ընկերաբանի հովեր առնող այդ անո-

րակերի տգէտը՝ իր խելքէն անսահմանօրէն բարձր ու դժուար հարցի մը՝ երկնային վճիռներ կ'արձակէ անձնասպանութիւնը պաշտպանելով։ Ժիծաղելի չէ՛։ Երբ անգամ մը դժբաղդութիւն ունեցայ զինքը անձամբ ճանչնալու, առաջին խօսքը եղաւ իր սնանկ մտքի արտագրութիւնները՝ ցուցնելով առաջարկելով ինձ որ՝ իր անձնասպանութեան վրայ գրուած յօդուածը կարգամ։ Առի կարգացի ու ցաւեցայ թէ Արեւելեան Մասնուի պէս ազգօգուտ լինելով մը ի՞նչպէս իբրեւ նիւթ հրատարած էր այդ շարագրութեան փորձը, (թէպէտեւ նոյն թիւին մէջ խմբագրութեան կողմէ ու յաջորդ թիւերուն մէջ կարող գրիչներ ջախջախիչ պատասխաններով հերքած էին այդ երկար աշխատութիւններու արդիւնք, ճշակտոր եղած շարագրութիւնը։ Կարծեմ կը բաւէ գաղափար մը տալու համար (ի՞թէ չէք կարգադրած այն յօդուածը) թէ անձնասպանութիւնը եւ անձնուրացութիւնը չէ կրցած իրարմէ զանազանել, նպատակս երբեք անհատով զբաղել չէ, միայն ուղեցի անոնցմէկը (որ ամենէն կարողի հաշակը հանած է) իրիւն նըմոյշ ներկայացնել, որով մնացեալը դուք ինքնին կրնաք երեւակայել։ Շատ երկար կըլլայ մի առ մի թուել այն ամեն յոռի վարմունքներն որոնց հանդիսատես եղած են ամեն լուրջ հայեր։ Այս պարոնները իրենց անճոռնի շարժումքներով ու խօսակցութիւններով, խայտառակ քաղաքականութիւնները եւ զած են բարիքցիներուն։ Անոնցմէ երկու հատ գիպուածով կը տեսնես լիւքսէմպուրկի պարտիզին մէջ որ հայերէն կը խօսակցին սոպէս։ «Եւհու անցիալ գիշեր ամանդիս» գայի, քէսթիօն մը բօլէ ըրինք. . . յետոյ ինձ ըսաւ որ միասին բռնաբանու մը ընենք, մեռտա լու խեղճը չը գիտերք ժը սուր տան լա բիւսէ։

միւս ընկերը է պիէն, սա նը վօ. բա լա բէն. իմինս միայն ինձի համար կ'աշխատի»։ Այս օրինակ լիտի ու զգուշի խօսակցութիւնները իրենց բարբերուն ամենէն յատկանշական կողմը կը ներկայացնեն, ու իրենց վրայ լաւ երազողներ օր մը պիտի տեսնեն թէ ազգին ամենափառապաշտարը պիտի կոչուին, անոնք որ ի՞նչիւր ըլլալու կոչուած էին։

Անոնք տխուր իրողութիւններն զոր հերքել կամ ուրանալ բացարձակապէս անկարելի է գրեթէ բաղդաբար։ Սակայն միւս կողմանէ եթէ կայ մեզի համար մը խիթարական կէտ մը, այն է որ՝ կան ազգաստիկ մի քանի ուսանողներ, որոնք կեանքի տխուր հոմակերպութեամբ եւ ահաւոր զբոյններով, բացակայ ամեն պանդառման խրախճանքներէ ու հաճոյքներէ, քաշուած իրենց խցիկին խորը անդադար կաշխատին որպէս զի ժամ առաջ օգոստոս կար ըլլան թէ իրենց եւ թէ ուղիւն։

Բարիկի հայ գաղթականութիւնը երկու որոշ զտաւարդներ կը բաժնուին։ Ար Գրամազիսի տէր Ռուսահայեր ու Տաճկահայեր որ զխաւորապէս անթիքիթէի եւ գոհարավաճառութեան առուտուրով կը զբաղին, թէպէտ այդ արհեստներուն մէջ, հրեայներ ամեն ազգէ գերակշիռ գերք մը ունին, բայց եւ այնպէս հայ յերն ալ մեծ մասամբ բարեկեցիկ վիճակ մը ունին։ Իսկ միւս գաւազակաւոր քրքալէթ (ամերիքան ֆրեյմ) եւ պիստակ ծախելով կը զբաղին։ Այդ գործին ձեռնարկելու համար երկու ֆրանգ դրամազուլս բաւական է, որով կարելի կըլլայ մինչեւ 8-10 ֆր. շահիլ։ Այս պղտիկ վաճառականութեան հրապարակը միմիայն հայերու ձեռքն է, որուն շնորհիւ քանի մը չափազանց խնայողասէր կենսաբայներ այսօր 2-3 հազար ֆր. ձեռք կը գտնեն։ Անոնք

ցած. կարծես ընդհատուած շնչառութիւնը վերանորոգելու համար։

«Սաթեմիւր» ալ բաւ է, միմեջեց մօտաւոր ձայն մը։

— Լոնցէ՛ք, ձայն մի տաք հառաջեց խեղդուկ եղանակով մը յուսահատ մայրը, հոգեհատոր զաւակս կը ննջէ, հըրեշտակի քուն կը քաշէ չըլլայ արթնայ»։

Սեղճ կիւր սրտին ցաւէն չէր գիտեր ինչ որ կը խօսէր. իր պատասխանին վրայ եկեղեցիին մէջ գտնուած ժողովուրդը արցունքի յորդ կայլակներով մեծածայն ողբալու սկսաւ։ Բարոյաւորութիւնը ատոր վրայ պահ մը խաբանեցաւ։

«Մի՛ լաք, կրկնեց տիկին Սաթեմիւր, չէ՛ ինքզինիւնիդ մի խաբէ՛ք, անիկայ մեռած չէ, տեսէք երիտասարդական այս անմահ թաղութիւնը, այտերու այս կարմիրները, աստուծոյ ամենագոր մատներով գծուած սա սեւ յօնքերը ունեցողը, սա աղամանդ աչքերը կրնան մեռնիլ, չէ՛ մի լաք»։

Սաթեմիւրը բողբոռովն սպառած էր.

սա խօսքերը արտասանելէն լուրջ մը ետքը նուազեալ ընկաւ։ Հազիւ կըրցան սթափեցին։

Եկեղեցական արարողութեան աւարտէն ետքը բոմ ելաւ առաջնորդը եւ հանգուցեալէն աւելի անոր ընտանիքի մասին պատ ի պատ կարգ մը բանիք խօսեցաւ։ Ըսաւ թէ Շուշանը պատուաւոր ընտանիքի մը պապուն մէկ շատախոյն էր. վերջապէս միսթարութիւն մաղթեց երկինքէն մօրը եւ եղբորը։

Անկից ետքը գործնաւոր Ալիքսանը, եւ կենդանի լիցուով մը, դրուատեց բաւական խիղիւս մըտքերով Շուշանի հոգին, անոր տեղւոյն հայ երիտասարդուհիներու մէջ խաղացած գերը վեր առնելով. ներկաներէն շատերը որոշ բան մը չկրցան հետեւ գնել Ալիքսանի խօսքերէն, միայն անոնք սր շատ մօտէն ճանչցած էին Շուշանը՝ անոնք միայն կրցան ըմբռնել ինչ որ Ս. Գէորգ թաղի երիտասարդ ուսուցիչը ըսել կուզէր։

Ալիքսանի զամբանականը հազիւ թէ

լնեցած եկեղեցիի սեմին վրայ երեւցաւ Մինաս գլխիկոր եւ արտասուալից։

Յանկարծ հաւատարմութեան մէջ կայծակի արագութեամբ ամբողջ եկեղեցիին շրջանը ընող փարտուք մը զգալի եղաւ։

Մինաս պատր, իրեն համար ունեցած շարաշուք նշանակութիւնը ըմբռնելու համար նկատութիւն չբացեց։ Հոն ներկայ եղողները Մինասը եւ Շուշանը ուրոյն ուրոյն գնահատած էին։ Մինասի բարոյական խոր անկումը գիտէին որ քանդած էր Շուշանի սիրտը եւ թէ անոր խելագարութիւնը եւ այդ վիճակի մէջ արտասանած կցկտուր պարբերութիւնները իր եղբոր մասին զգացած վիշտին հետ սիրտ կապ ունէին։

Մինաս յամբաքայլ եւ զոգոցմուն եկաւ դադաղին մօտեցաւ։ Տիկին Սաթեմիւր միշտ աղջկանը քով կը հսկէր։ Հասարակութիւնը որ մօր եւ որդոյն մէջ կեցող սառնութեան հետամուտ եղած էր եւ հիմայ որ կը սպասէր որ այդ սառնութիւնը մօրը սրտին մէջ ատելութեան փոխուած ըլլալով նկա-

կարող են գինեբրը բարձրացնել կամ պակսեցնել, վերջերս մեծ քանակութեամբ ծախողներուն մէջ մրցումը կար բելօին 1 կամ ե. կու սու պակսեցնելու համար. թէպէտ և այս միջոցին «մօռթ սէ-լօն» է և հետեւաբար հրապարակը քիչ մը «քրիչ» կը տիրէ Բարիդ-քիւններուն մեծ մասին օգտփոխու-թեան գաղափարը ըլլալուն: Մեծ մա-սամբ գաւառացիներ են ուղղակի Բարիդ գաղթած, զուրկ ու է տարական դաստիարակութեան և կրթութեան. կան նաեւ Պոլսե-ցիներ ալ: Ասոնք ունին իրենց յատուկ սրճարանը, ուր կը պատ-րաստեն իրենց ծախելիք ապրանքը երբեմն խօսակցելով, երբեմն վի-ճարանելով, և շատ անգամ ալ կռուելով. և երբ որոշեալ ժամա-նակը գալ կը սկսին իրարու ետեւէ լալորդաբար դուրս ելնել և կը կորսուին Բարիդի ամենաեղուն փողոցներու մէջ: Այն նաեւ մի-բաններ ալ որ զգալով այդ ար-հեստի տխրութիւնը, քաշուած ի-րենց սենեակին անկիւնը, երկար վարանումներէ վերջ տարպուս-թանքով, անշուշտ 2-3 գա-ւաթ ոգելից ըմպելիի ազդեցու-թեան տակ: Ինչպէս յայտնի է այս տխրահռչակ գործը ամենուն տանելի չէ, բայց այն որ այդ գործը միայն ապրիլու համար չ'ընեն և նպատակի մը կը ծա-ռայեն, այն ատեն այդ մեծ մարդուն առջեւ. յարգանք ու հի-ացում միայն դպալու ենք:

Ատենէ մը ի վեր զորոյց մը կայ թէ հայ ակումբական ուսանողու-թիւնը «Համալսարան» անունով, զուտ գրական ու գիտական ամ-սաթերթ մը պիտի հրատարակէ որուն պիտի տշխատակցին կարող ուսանողներ և աւարտականներ: Բոլոր սրտէ յաջողութիւն կը մաղ-թենք:

Ե. Փ.

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ՝Ը

Տիրա Պօնճուքեան զրկած էր ինձ օրինակ մը, իր հրատարակած «Նոր Ընթերցարան»էն և խընդ-րած էր որ անկեղծօրէն ըսեմ իմ

աղով որ տիկին Սաթեմիկի եւ Մինա-սի հանգիստը մը այդ պարագային շատ աղիտաբեր կրնար ըլլալ աշխատեցաւ իր մէկ երկու անգամին միջոցաւ զայն քակի մը վայրկեանի համար անկիւն մը առանձնացնելու:

«Ան աղջիկս առանձին թողո՞ւմ, հե-ծեց խեղճ կրնր. բայց ո՞վ պիտի պաշա-պանէ զինքը, ա՛նիկայ հայր չունի. զիս միայն, մայր մը ունի. անպութներ ինչպէս զիս անկէ պիտի բաժնէք. ո՞վ էք դուք եւ ի՞նչպէս առանկ թան մը կառավարելք. իմ առաքինի ծոցիս մէջ սնած այս Շուշանի զաւակէս ի՛նչ կու-ղէք:»

Դաւաճանը ուարտաց: Ով՞որ ուշա-գիր եղած է իր կեանքի ընթացքին մէջ ձօր մը իօսքերէն աւելի աղբու-բատիք չկան աշխարհիս մէջ: «Շուշան քոյրս» հեծեց մօրմէն զգալի ըլլալիք չնշտով մը:

«Ահա իր դահիճը, գոչեց խեղդուկ ձայնով մը տիկին Սաթեմիկի:

Սաթեմիկը գետին տապալիցաւ ոչ եւս վեր կենալու համար:

կարծիքս անոր մասին: Շատ մը նկատումներով լաւագոյն համարե-ցի ոչ միայն անկեղծօրէն ալլ հը-րապարակաւ ընել իմ գնահատումս այս դասագրքի մասին, որ այն-քան յարմար տոնին հրապարակ կելնէ:

Ամէն երկրի մէջ կրթական նու-խարարութեանց քով, մնալուն Յանձնաժողովներ կան, որոնք մանրակրկիտ քննութիւնէ մը կան-ցունեն պատրաստուած դասագր-քերը, և երբ համաձայն կը գտնեն զայն մանկավարժական արգի պա-հանջումներուն այն տոնն միայն պաշտօնագէտ կը յանձնարարեն ա-նոր գործածութիւնը, թաղային և ալ վարժարաններու մէջ: Ու որքան դասագրքին ըլլալ տար-րական, այնքան աւելի խստապա-հանջ կըլլայ Յանձնաժողովը կա-տարուած աշխատութեան համար, իրողութիւն մը, որ կը շնչտէ մա-նաւանդ մանուկներու կրթական գործին մէջ, դասագրքին կատա-րած կարեւոր դերը:

Մեր մէջ՝ կեզր. Ուսումնական Խորհուրդը, հակառակ իր բարի կամեցողութեան, անուանապէս մի-այն կրնայ զբաղիլ այս տեսակ խնդիրներով, որովհետեւ այս ինչ կամ այն ինչ աղային խաթրը, յանձնարարականը մանկավարժա-կան պահանջումներուն տեղը բռն-նած է միշտ: Հետեւաբար մեր մէջ հեղինակին խղճամտութենէն միայն կախում ունի յարմարագոյն լաւ դասագրքերու պատրաստու-թիւնը, որուն օգտակարութիւնը աւելի կը շնչտուի մանաւանդ երբ փոքրիկ մանուկներու կրթական գործը յանձնուած է ինչպէս կը պատահի դժբաղդաբար շատ ան-գամ՝ ապիկար կամ անփութ ձեւ-քերով:

Ապահովապէս կրնամ յայտա-րարել թէ այս ուղղութեամբ՝ Տ. Պօնճուքեան յաջողած է մեծագոյն մասամբ: Անկեղ իր դասագրքին պատրաստութեան մէջ կրցած է գնել պահանջուած խնամքն ու խղճամտութիւնը՝ և վարժ աչք մը առաջին ակնարկով պիտի կըր-նայ տեսնել որ եւրոպական լաւա-գոյն ընթերցարաններու, մասնա-

ւորաբար Գերմանականներու հե-տեւողութեամբ կատարած է իր գործը, անշուշտ կարելիութեան սահմանին մէջ: Դասագրքին ա-ռաւելութիւններն են 1) տղոց գը-րել կարգալ սովորեցնել ծանօթ ա-ռարկայի մը անուան հնչիւններու լուծմամբ: 2) Դասերուն խնամոտ աստիճանաւորումը՝ որով տղան հետզհետէ դիւրինէն դժուարը, պարզէն բարդը կոնցնի, որքան կարելի է քիչ յոգնութեամբ 3) Պարզ և յստակ լեզուն և տղուն հասկացողութեան մատչելի նիւ-թերու ընտրութիւնը: 4) Այս կար-գի դասագրքի մը համար անհրա-ժեշտ եղած իրադիտական ծանօ-թութիւններու համեմատական ճո-խութիւնը: 5) Պատմութեան քննարկ և երգերու առ հասարակ զուար-ճալի հանգամանքը, որ այնքան հարկաւոր է տղուն ուշադրութիւ-նի լարուած պահելու համար: Այս տեսակէտով անոնցմէ մանուկանդ մի քանին շատ յաջողուած կտոր-ներ կրնան նկատուիլ: 6) Ազգ-պատմութեան ամենէն նշանաւոր մի քանի դէմքերու և դէպքերու նկարագրերը, հէքեթի ձեւով ու ոճով:

Որքան կը յիշեմ թուրքիոյ մէջ վերջին տարիները հրատարակուած նմանօրինակ դասագրքերէն ոչ մին այս ամեն առաւելութիւնները կը ներկայացնէ նոյն չափով:

ԿՐՈՍ ՄԻՔՍՏԷԼԵՍՆ

(Շարունակելի)

Ա. Զ. Դ.

Քաղաքիս Ազգ. երկսեռ վար-ժարանները և Մանկավարժութիւնը, 1 սեպտեմբեր, չորեքշաբթի օր կը վերադառնան:

Ուստի ծնողներ և պաշտպան-ներ, կը հրաւիրուին գաղութէն սկսեալ ամեն առաւօտ ժամ 9-12 խորհրդարանը անձամբ ներկայա-նալով տշակերտներու ընդունելու թիւան պայմաններուն վրայ բա-նակցիլ և ստանալ մօից արտօնա-գիրը:

Ի դիմաց հոգաբարձութեան Ազգ. երկսեռ վարժարանաց Ասեմադարի Ասեմապէս Դ. Կիւպլաքեան Գ. Մ. Թովմասեան

Յուդարկաւորները երկու դագաղ տա-րին զետեղեցին երկու փոսի մէջ, որ իրարու յարակից էին: Տիկին Սաթե-միկի համար իր Շուշանի մահէն ետք ասկից աւելի բազմալի եւ զրախաղա-յիլ մահ մը չէր կրնար ըլլալ:

Է.

Յիւդափոխական գաղափարի ամրա-պէս շողկապուիլը վահրամի համար պատճառ մը չէր Հրանդիւնի երկրորդա-կան նշանակութիւն տալու. եւ կամ զայն մոռնալու համար. այդ երկու բա-նն ալ մեր երիտասարդին համար ան-կարելի ըլլալու աստիճան դժուարին է-ին: Ընդհակառակը ջիւնջ գաղափարա-կան բարձունքի մէջ սլացող անհատ երիտասարդին համար սիրոյ հրայրքը անխուսափելի պէտք մըն է. զի եթէ յեղափոխականը կամ ճշմարիտ գաղա-փարական մարդը ազգային անկախու-թեան մը կը բաղձայ ասկից հասա-րակականի հետ անհատական երջանկու-թիւնը ապահովել կը նշանակէ և ան-հատական երջանկութեան մեծ մասը ներկայ ընկերական անհաւասար պայ-

մաններու մէջ սրտի մօտիկ ընտրու-թեամբ մը ամուսնանալու և պատրաստ-ուած սերունդներ հասցնելուն մէջ կը կայանայ ըստ իս:

Արդար ըլլալու համար ըսենք սա-կայն որ վահրամ Պոխ հաստատուելէն ետք ժամանակ մը Հրանդիւնի վրայ դէթ մեր տրամաբանութեամբ արժանի կեր-պով չմտածեց, կարծես սիրոյ ժամա-նակաւ որ զինադադար մը տեղի ունե-ցաւ անոր սիրտին մէջ: Միևնոյն բա-նը տեղի ունեցած էր Հրանդիւնի համար ալ պզտիկ զընդու մէ մը ետքը. վեր-ջապէս սիրոյ զգացումը երկուքին մէջ ալ ատենէ մը ետքը իր առջի համեմա-տութիւնը գտաւ:

1890 մայիսի 27էն եւ ազգային Հի-ւանդանոցի հանդիպակաց պարտէզին մէջ Պոխահայութիւնը վայելուչ չքով կը սոսնէր Ազգային Սահմանադրութեան տարեդարձը: Բարեպաշտ ժողովրդեան խուռն բաղութիւն մը լեցուած էր Ս. Փրկչի անձուկ մատուռը, ուր պի-տի պատարագէր Գաբրիէն Սրուանձ-

ԼՐԱՔԱՂ

◊◊◊

Հինգշաբթի օր Սուլթանի գա-հակալութեան տարեդարձին առ-թիւ Պոլսոյ ամեն թերթերը բռն-նութենէ ստիպեալ Համիտին հա-մար այն աստիճան չափազանցեալ գովաբանականներ գրած են որ լուրջ կարգացող մը գովեստէ ա-ւելի հեգնութիւն կը համարի:

Օրմանեան բարձր եկեղեցական-ները ու աշխարհական ժողովա-կանները գրուիւր հաւաքած հան-դիսաւոր թափօրով մը Պատրի-արքարանէն եկեղեցի իջաւ, ուր Համիտին համար աղօթք ու գիրք կարդացուելէ վերջ, քարոզ մը խօսեցաւ «Ամենայն իշխանութիւն ի վերուստ տուեալ է» փոտած բը-նարանին վրայ. այս բնարանը արդէն կը պարզէ թէ Օրմանեան որ աստիճան ստրկացուցիչ ու մեղկ գաղափարներ արտայայտեց հոն:

— Պոլսոյ թերթերը կը գրեն թէ՛ հոգեւոյս Գրիգորիս Եպիս-կոպոս Ալէաթճեանի հոգակոյտին վրայ հանրային հանգանակու-թեամբ դամբարան մը պիտի կա-ռուցուի:

— Էլմիսնայ «Արարատ» ամ-սաթերթը կը գրէ թէ յանուն Սինոդի տրուած հայրապետական կոնգակ մը կը հրամայէ կրօն-ժողովներուն ասկէ վերջ հինգեր-րորդ աստիճան ազգականութիւն ունեցողներուն պսակուելու թույ-տութիւն ընել:

— Սամաթիացի բարեկեցիկ, ուս-եալ 16 տարեկան աղջիկ մը յոյն անպատիւ շրջանկիւրի մը կը սի-րահարի և կը գիմէ Յունաց Պատ-րիարքարանի դաւանափոխ ըլլալու համար. բայց յոյն Պատրիարքը՝ կը հրամայէ չընդունել աղջկան խնդիրը իրեն անարժան մէկը ընտրած ըլլալուն պատճառով: Այժմ այդ աղջիկը մեր Պատրիարքարա-նի միջոցաւ հայ քահանայի մը յանձնուեր է, կաշխատին հայ ե-րիտասարդի մը հետ զանի ամուս-նացնել:

Կանց եպիսկոպոսը: Ժողովրդեան Մաս-նաժողովի գործունէութեան համար ան պայման յարմար էր այդ օրը, այդ բա-նը արդէն տառաջ հաշիւ եղած եւ ո-րոշուած էր կարմիր գրգռիչ յայտարա-րութիւններ ստաբաւանել եւ ցրուել: Յայտարարութիւնները որ ձեռքով կը գրուէին պատրաստուեցան երեք հա-րիւր հատ. բաւականացնող թիւ մը որ հիւանդանոցը ժողովուած հայութեան վրայ պէտք եղած տպաւորութիւնը կըր-նար գործել:

Այդ օրը տառաջուուն կանուխ միա-ցան Մասնաժողովի երեք անդամները եւ Սիրքէճէի կայարանէն Եւթի-Գուլէի համար տոմսակ ձեռք բերին. վայրա-շարժը սկսաւ իր սրարշաւ գնացքը եւ երբ ձինձի-մէյտանը անցան Լիւսնի կարգադրութեամբ վահրամ եւ Ե. եր-կաթուղիի կառքին էրկու պատուհան-ներէն հայաբնակ գիւղերու ճամբան մինչ Եւթի-Գուլէ իսկ մը յայտարա-րութիւններ սփռեցին:

Ե. Կամսարական

(Շարունակելի)

